

Յ. Մեղնիկեան

առաջինը եղաւ, իսկ յետոյ ընկերութեան արտադրութիւնը տեղի ունեցաւ (տես «Մշակ» 1896 թ. № 134): Դրանից յետոյ, չը նայած որ երկու տարուց աւելի է անցել, ընկերութիւնը ոչ մի նիստ չէ ունեցել, թէև կանոնադրութեան մէջ որոշակի յիշված է սովորական պարտադիր նիստերի ժամանակը: Երկրորդը էր պատճառը, որ ընկերացարանի համար «HABA» և այլ իր խելքը կտրած, հրատարակութիւնները ծախսատեալ բերել էր տալիս ընկերութեան զաւթապահ: Բացի դրանից՝ գիւղացիները համարեա թէ բոլորովին չեն օգտուում գրադարանից, չը նայած որ բաւականաչափ ընտիր գրքեր կան: Նոյն իսկ ընկերութեան չինութիւնը երբեմն ուրիշ նպատակներ է ծառայեցրել և, ինչպէս լսում ենք, գրքերից էլ կորչում են:

Այդ բոլորի պատճառն այն է, որ այդ կենդանի, գաղափարական գործին ձեռնառն վերաբերմունքից էլ վատ վերաբերվեցին: Հիմա էլ ընկերութիւնը համարեա կազմալուծված է և միայն թղթի վրա գոյութիւն ունի, քանի որ ընկերութեան նախագահ իշխ. Գ. Ա. Թարխան-Ստուրախով անսկիւր ամսից աւել է, որ վախճանվել է, իսկ գահաձապահը ընդմիջտ հեռացել է Արաբաշաղից: Պէտք է գոնէ հիմա, տարվայ վերջին, ընդհանուր ժողով գումարել և պաշտօնաւոր անձանց ընտրութիւն կատարել ու որոշել, թէ ինչ հրատարակութիւններ պէտք է ստացվին յաջորդ տարվայ ընթացքում: Ժողով գումարելու պարտքը ծանոթանում է Բարալէթի ուսումնարանի ուսուցիչ և գրադարանապետ պ. Ս. Գուրգէնյանի վրա, որ մի և նոյն ժամանակ պատասխանատու անձն է նախագահութեւն առաջ: Զը պէտք է թողնել, որ այդ համակրելի գործը մենք, որքա ըստընական պատասխանատուութիւնը կրնին շնորհակալութեամբ միակ պաշտօնատար պ. Ս. Գուրգէնյանի վրա:

Ընկերութեան անդամ

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒԻ ԳԱՒԱՌԻՑ

Մեղրի, դեկտեմբերի 8-ին

Մեր նախորդ նամակով հաղորդել էինք, որ մեր հասարակութիւնը, մեծամասնութեան անհաշիւան ծնունդով աչքի առաջ ունենալով, փող էր յանձնել իր կողմից ընտրված երեք անձանց, որ Սերանից ցորեն բերել տան: Ժողովուրդը ամբողջ երկու ամիս սպասելուց յետոյ, վերջապէս օրերումս ստացաւ մօտաւորապէս 670 պուղ ցորեն, իսկ 400 պուղ ցորենը խոյրն-դոտներ է հանդիպել: Ինչպէս տեղեկացանք, այդ 400 պուղը Սերանի նահանգապետի կարգադրութեամբ՝ իրաւունք չեն տուել արտահանելու: Այդ առիթով այստեղի տանտէրի և չինական դատաւորների ստորագրութեամբ ընտրված պարտնեւոր մի վիճակաւ ուղարկեցին Սերան՝ տեղական աղմուկաբերական ներկայացնելու: Երբեքս ասացայց, թէ այդ ցորենը արտահանում են ոչ թէ ամբարեւել նպատակով, այլ մի ամբողջ հասարակութեան կերակրելու համար: Յոյս ունենք որ շուտով կը ստանանք ցորեն: Թէև ուշ եղաւ, այնու ամենայնիս հասարակութեան ակնկալութիւններն իրականացած են: Այդ դէպքը իբրեւ մի նոր փորձ, մեր ներկայ հասարակական տխուր կեանքի մէջ ուրախալի երևոյթ կարել է համարել: Յուսալի է որ սկսված գործը կը շարունակուի և այսուհետև հասարակութիւնը ուրախութեամբ կը վերաբերվի շտեմարանի կազմակերպութեանը:

Այսօրվանից ցորենն սկսել են բաժանել հասարակութեան որոշած չափով՝ ժողովրդին, հաշվով պուղը 1 րուբլի: Հասարակութիւնը իրաւունքով առաջին օրինակից, խնդրել է, որ Սերանից կրկին 1000—2000 պուղ ցորեն գնին և ուղարկեն:

Շնորհակալութեան են արժանի ամբողջ հասարակութեան կողմից պ. Ստեփան և Գաիթ Խօջաբեկեանցիները, որոնք ուրախութեամբ յանձնատան ցորեն գնել և ծանապարհել, յոյս ունենք, որ այդ պատրաստակամութիւնը նրանք ցոյց կը տան և այսուհետև:

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՈՐԻԹԵԱՆ

Նոյսի, դեկտեմբերի 10-ին

Հայոց բարեգործական ընկերութեան Նոյսի տեղական ճիւղի գրադարան-ընթերցարանը լինելով աղքատ դրութեան մէջ, նախկին տարիների նման անկարող է իր բազմաթիւ յաճախողներին լրիւ գոհացում տալ: Մասնաւոր լրագրիչներին, ամսագրերին և շաբաթթիւներին կողմից ուսումնասիրած ընթերցողները զրկվում են դիտութեան պաշարից և ընթերցարանին էլ չէ կարենում իր վիճակի ծառայել: Ուստի վարչութիւնն սրանով պատիւ ունի հրաւիր կարգաւ այսպիսի մի հիմնարկութեան նախաձեռնողներին, որ ներդրութիւն կրեն՝ թերթերով,

ամսագրերով և այլ բաներով օգնել աղքատ ընթերցարանին:

Մասնաւոր հրաւիր ենք կարգում ունեւոր պանդուխտ նուիրելիներին՝ աջակցել իրանց հայրենիքի միակ միակարական հիմնարկութեան:

Նախագահ վարչութեան՝ Խ. Խօջաբեկեանց Գործաւարձ Գ. Մարտիրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, դեկտեմբերի 18-ին, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ներկայացաւ Վեհափառ Վարդապետին և դեկտեմբերի դպրոցի վերաբերեալ կարեւոր գործերի մասին: Հոգաբարձութիւնը յայտնեց, որ նա արդէն վերջացրել է իր չորսամեայ պաշտօնավարութեան ժամանակը և սպասում է հոգաբարձական ընտրութեան, որպէս զի յանձնի գործերը նոր հոգաբարձութեան: Յիշեցնելով, որ առաջիկայ 1899 թուին պէտք է լրանայ դպրոցի եօթնամասնականը, հոգաբարձութիւնը ցանկացաւ իմանալ, թէ ինչ ձևով պէտք է տնօրէն այդ յօդուհանը, որպէս զի համապատասխան նախապատրաստութիւններ սկսվին դպրոցի վարչութեան կողմից: Այնուհետև հոգաբարձութիւնը ներկայացրեց ուսուցչական կենսաթոշակի դրամարկը հաստատելու ծրագիրը վերջնական ձևակերպութեամբ: Վեհափառ ուղարկութեամբ վերաբերվեց հոգաբարձութեան առաջարկներին և խոստացաւ բոլորին լուծում տալ կարճ ժամանակում:

Մեզ հաղորդում են, որ բժշկապետ Յ. Գասպարեան, լսելով թէ քանանիների ապահովութեան ընկերութիւնը լուծվելու վրա է և դիտաւորութիւն կայ դրամադուրի բաժանել Քիֆլիսի քանանիների մէջ, յայտնել է ընկերութեան վարչութեան, թէ նա, իբրեւ նախապատենից մինը, համաձայն չէ այդ ծրագրին և խնդրում է ուղարկել իր նուիրած 300 րուբլի գումարը «Братская Помощь» ժողովածուի խմբագրութեան՝ ուսու-հայկական որբանոցների օգտին:

Յիշեցնում ենք հասարակութեան, որ վաղը Քիֆլիսի Ժողովարանում, նշանակված է պարահանդէս Հայոց բարեգործական ընկերութեան օգտին: Հասարակութեան համակրութիւնն ու աջակցութիւնը իրաւունք կը տայ նրան պահանջել ընկերութեան կառավարիչներից եռամս-հուն գործուհեութիւն:

Մօսկվայի լրագրիչները հաղորդում են, որ դեկտեմբերի 13-ին կայացած հայ ուսանողական երկնային մեծ աշխուժութիւն է ունեցել: Այս անգամ դեկտեմբերի 13-ին մէջ աչքի էին ընկնում մի քանի տեսարաններ, որոնք ներկայացնում էին Հայաստանի աւերակները, Կազեմի սարի տեսքը և Կիլիկիայի աւերակները, լուսնի լոյսով լուսաւորված: Կոնցերտից յետոյ սկսվեցին պարեր՝ սաղմոսահարների և դուդուկիչների նուագա-ծութեամբ: հայկական աղբյուրի պարերը կատարվեցին աղբյուրի զգեստներով, ամենից շատ դուր եկաւ հասարակութեան լեզգիները: Սեր-կոյի մասնակցում էին բացի օպերային արտիստներից, նաև սիրողներ, Լիովինովի դեկա-վարութեամբ:

Մի հայ երիտասարդ, Մելքոն Գանիշեան՝ որ առիթ է ունեցել Սանկթայիտ տեսնել թիթեղեայ արկիւններին մէջ պահվող կաթի պատրաստու-թիւնը, փորձել է արել փոքր չափով պատրաստել նոյն տեսակ կաթի և ստացել է աջող հետևանքներ: Սրկու-երեք ամիս առաջ փախ-ված կաթը չէ կորցրել իր համը և թարմութիւ-նը: Պարոնը մտադիր է ցոյց տալ իր պահա-նած կաթը ժամանակներին և նրանց կարծիքն ստանալուց յետոյ ձեռնարկել գործի մեծ քա-նակութեամբ:

Ստացանք հետեւեալ նոր գրքերը: 1) «Հայոց նորագոյն բանաստեղծները» մասն 1, Ռուբէն Բերեբեկեանի, Ռոստով, 1898 թ. գինն է 20 կօպէկ: 2) «Բարդաբաժնի և Գեօքարչիի բալադ», Սմբատ Գաբրիելի, Բագու, 1898 թ. գինն է 10 կօպ: 3) «Պատկար», նրա կեանքը և գիտական գործունէութիւնը, թարգ. Գ. Բաղդ. Քիֆլիս, 1898 թ. հրատարակութիւն Քիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութեան, գինն է 20 կօպ: 4) «Тифлисский Настольный Календарь» на 1899 г. издание В. А. Герценштейна: 5) «Ինչպէս են կազմում գրքերը», Զորար Ստեփանեանի, Քիֆլիս, 1898, գինն է 25 կօպէկ: 6) Г. Я. Юревич—«Сборник арифметических задач» ч. I и II, С. Петербургъ 1898, գինն է 20 կօպէկ:

ԳԱՆՁԱԿԵՑ մեզ գրում են. «Գեկտեմբերի 13-ին, տեղիս կուրքի գահիճում, պ. պ. Խարա-

զեան, Միրզոյեան և Կիլ. Զաբէլ, տեղական սիրողների հետ խաղային «Գիւմակահանդէս», զրամա չորս գործողութեամբ, հեղինակութիւն Լեւոնտովի, և ձեւ էլ բոլոր մօցվելութիւն: Վերջին տարիներս դեռ այդպիսի բազմութիւն չէր տեսնված հայկական ներկայացումներին, բայց խաղը անցաւ թողլով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻՍՏԻՑ

Լէյպցիգ, դեկտեմբերի 22-ին

Արդէն «Մշակ» ընթերցողներին յայտնի կը լինի, որ հիւսիսային Գերմանիայում ապրող դա-նիացիները հալածվում են գերմանական կառա-վարութիւնից լսի այն պատճառով, որ ցանկա-նում են դանիացիներ մնալ, և որ կարճ միջո-ցում 60-ի չափի դանիացիներ աքսորվեցին, ո-րոնք մեղադրվում էին որպէս դանիականութե-թեան պրօպագանդիստներ... Իսկ այժմեան լը-րագրական տեղեկութիւններից երևում է, որ այդ թիւը բարձրացել է մինչև 117-ի... Բացի դրանից, ինչպէս հաղորդում է «Berl. Tageblatt», տեղական պաշտօնեայ ֆոն Վեյդեր պահանջեց բոլոր այն ծնողներին, որոնց որդիքն ուսանում են Գանիայում, որ նրանք իրանց որդեց յետ կանչեն: Սրա դէմ ծնողները տուեցին բացասա-կան և խիստ պատասխան: Ապա պաշտօնեայ ֆոն Վեյդեր բացատրեց, որ այդ ձեռնարկու-թիւնը հնարաւոր է ի կատար ածել նրանով, որ ծնողներից պէտք է պահանջել, կամ իրանց որ-դեց յետ կանչեն և կամ իրանք՝ ծնողները հե-ռանան...:

Զը կամ մէկը, որ կառավարութեան «բարե-կամ» համարվել և մի և նոյն ժամանակ բողո-քէր այդ անիրաւութեան դէմ. բայց ահա գտնե-վում է վերջապէս մի՝ կառավարութիւնից կա-խում ունեցող պրոեսական համալսարանի պրօ-ֆէսոր Հանս Գեյլըր-է-կ, որը քաջութիւն է ունենում, թէկուր պաշտօնից դիմելու և չօլի-նիստ հակառակորդներից *) խնայարար անուան-վելու դիմով—բողոքել այդ չը լսված անիրաւու-թեան դէմ: Ահա թէ ինչ է զրվում պրոեսական տարեգրքերի մէջ:

«Երկրորդ» նորերս կատարված աքսորված-ների բողոքները հասնում են մինչև երկնք: Գեր-մանական պատմութեան մէջ յիշված, Երկրորդ-Հօլշտէյնի պատերազմի ժամանակ, դանիացիներ իրանց աղգակից ժողովրդին ժամանելու վար-ժաւորը պախապակի է վերին աստիճանի, և սակայն այդ հանդամանքը մի խաղալիք է այն բռնապետութեան դէմ, որով մենք այսօր կա-ռավարում ենք այդ երկիրը: Լուսաւորեալ աշ-խարհին զղկեցնելու չափ անդիմութիւնից աւելի վատն այն է, որ մարդիկ կուրացած են այն հաւատով, թէ աղգայնականութեան կուր մէջ այդպիսի միջոցները կարող են տեղական հե-տեանքների հասցնել: Աղգայնականութեան գա-ղափարը նմանվում է այժմ կրօնականին: Ինչ-պէս ջերմեանող հաստացողներին ետևում իս-կին բարձրաճանձմ են դարձել կղեր, «հերետի-կոսներ» հոտ քաշողները, ինկվիզիցիյալի դա-տաւորները, որպէս զի յանուն սրբութեան, խաչառակ անսովորութիւններ գործեն, այն-պէս էլ աղգայնական գաղափարն այստեղ, այն-տեղ աղգային ֆանատիկոսութիւն է ծնում, որ ինքը լինելով անառաջագէտ և վայրենի, համար-ձակվում է մարդկայնութեան օրէնքները ոտըր տակ տալ և սրանով աղգային գաղափարին անուղղղի վնասներ հասցնել...:

Նամակը ուղարկելու վրա էի, երբ հե-ռադիրը յայտնեց կառավարութեան բռնած դիր-քը դէպի պրօֆէսոր Գեյլըր-է-կ: Ահա ինչ է տըղ-ված կիսապաշտօնական «Berl. Corresp.» լրա-գրի մէջ:

«Կառավարութեան կողմից յարուցած կարգա-պահական դատաւարութիւնը Բերլինի համա-լսարանի պրօֆէսոր Հանս Գեյլըր-է-կի դէմ մա-մուլի մեծ մասից եռանդուն ընդդիմադրութեան հանդիպեց: Թերթերից շատերը պախարակում են ձեռք առած միջոցները. կառավարութիւնը շատ քիչ պէտք է յուղիլ այդ պախարակմնե-րից, քանի որ նա իր կարգադրութիւնը հիմնում է իրերի և իրաւունքի կատարեալ ծանօթու-թեան վրա: Զեռնարկված կարգապահական դա-տաւարութիւնը նպատակ ունի ցոյց տալ, թէ որքան անհիմն է մամուլի այդ ընդդիմադրութիւ-նը: Խոյրը նրանում է, թէ արդեօք մի պե-տական պաշտօնեայ, այն ևս մի բարձրաստի-ճան պաշտօնեայ, կարող է բարձր օրինակ տալ, երբ իր պարտաւորութիւններին հակառակ դիրք

*) Որոնք չէին լինելու պատիւը անշուշտ պատկա-նում է «Hamburger Nachrichten» լրագրին, որը այդ մեղադրան խնայաբար անուանելու և դաբշելը հայտն-անքներ տալուց յետոյ, պահանջում է պաշտօնեայ ևս զրկել...:

է բռնում, երբ այնպիսի անպաշտ եղանակով է քննադատում կառավարչական կարգադրու-ղութիւնները, ինչպէս երեւց «Preuss. Jahr- bucher»-ի մէջ: Սա. Սարուխանեան

ՆԱՄԱԿ ԲՈՂԱՐՈՒՍՏԻՑ

Սօֆիա, նոյեմբերի 28-ին

Երկու տարի է ի վեր կաթողիկոսական այցելու-հովիւ Արքեպիսկոպոս Կրէքի Բոլղարիա, Ռումանիա և Աւստրիա: Որոշ չնքը զիտեր ամե-նայն Հայոց Կաթողիկոսը ինչ մտադրութեամբ այսպիսի կարեւոր պաշտօն տուած է աս մար-դուն. որովհետև ուր որ գացած է, խառնակու-թիւններու խմորն եղած է: Բոլղարահայը միշտ համբարատար և եկեղեցական իշխանու-թեան հաղանդ, ակնածութեամբ վարուեց էլ-միանշի պատուիրակին հետ, բայց երբ Արքեպիսկոպոս ուղղակի բեմէն սկսաւ ատելութեան սերմեր ցանել, կիրքեր գրգռել, ժողովուրդը խիստ դալարացաւ և բողոքեց: Ելմիտմիտ, երեկ աղուկուելով մեր գաղափարներէն, կը հրամայի Արքեպիսկոպոսին, որ դադարէ Բոլղարիա այցելու հովիւ լինելէ և Աւստրիա երթալ, այն-տեղ մնալ: Բայց վարդապետը Մայր-Աթոռոյ հրամանը և աղգային տեղական իշխանութիւն-ները չը յարգելէ դատ, նաև արհամարհած է. երբ իրմէ կը պահանջուին պատշաճաւոր թղթե-րը, դանդաղ չը ներկայացնելէ դատ՝ կը պնդէ իր պաշտօնին վրայ: Մեզ դարձանք կրտայ այս անօրինակ անկարգապահութիւնը, որ կը տի-րապետէ այժմ մեր եկեղեցւոյ մէջ: Ելմիտմիտ լուրջ կարգադրութիւնը կրտպանեց. Բոլղարիա Արքեպիսկոպոս չէ, և այցելու հովիւ պաշտօնն ալ կապալով չի տրուել:

ՆԱՄԱԿ ՀԱՐԵՏՈՍԱՆԻՑ

Ճիւղալի, դեկտեմբերի 7-ին

Երէկ այստեղից ֆրանսիական կառավարութիւ-նը յիստն ուղարկ բաղկացած մի կրտաւան ու-ղարկեց դէպի Փայոնա՝ Մարշալին իրաւաւորելու և նրա արշաւախումբը Հաբեստանի ճանապար-հով վերադարձնելու համար: Կարաւանին ուղեկ-ցում են երկու ֆրանսիացի պաշտօնեաներ և հա-րիւր չափ տեղային սեղիւններ: Բացի ու-տեղեղէնի պաշարից, կարաւանն իր հետ տա-նում է նաև հագուստեղէն:

Հաբեստանից եկող լուրերին նայելով րաւ-Մանկալա, որ Գեկիւնում ապստամբել էր՝ ա-ռանց զիմադրելու իր դէմ եկող բանակին, խոյս է տուել դէպի երկրի խորքը: Բաւ-Մօթօնէն ընդ միշտ թագաւոր է հրատարակված Գեկիւնի նահանգին, որով վերջ կը տրվի այն ստեղ պապտամբութիւններին, որ ծագում էր այնտեղ րաւ-Մանկալայի առաջնորդութեամբ՝ Նեգուս Մենելիքից անկախ լինելու բազմաճիւղ:

Բաւ-Մօթօնէն կը փոխարինէ րաւ-Պոռու, իբրեւ Հարարի կառավարիչ, բայց վերջինս չէ կարող կատարել այն դերը, ինչ ունէր րաւ-Մօ-թօնէն և այն համակրութիւնն ունենալ դէպի երկրպագիները և դէպի բաղաւարկութիւնը, որ րաւ-Մօթօնէն տածում էր իր աղատամիտ ուղղութեամբ:

Պէտք է գիտենալ, որ Մենելիք Նեգուսա-Նեգրով է կոչվում, այսինքն թագաւոր թագա-ւորաց, որին հպատակվում են մի քանի հաբե-շական թագաւորներ, օրինակ համար՝ Կուրձա-մի թագաւոր Գալէյմաճօթ, Վօլայի թագաւոր Միքայէլ և այլն, որոնք բոլորն էլ թագադիր են: Այդպիսի թագաւոր պիտի հրատարակվի նաև րաւ-Մօթօնէն Գեկիւնում:

Գ. Արապեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—4. Պօլսից «Temps» լրագրին հեռագրում են դեկտեմբերի 9-ից հետեւեալը. «Թիւրքաց լը-րագրիները լուր լինն են պահպանում Գալատե-րիում ուսաց եկեղեցու օծելու մասին, որով հետեւ ցէնդուրան խոտութեամբ արգելել է լրա-գրիչներին մի բաւ անգամ յիշելու, թէ հանդի-սին ներկայ էին յունական և բողոքական կրօ-նական համայնքների ներկայացուցիչները:

Բերլինից հեռագրում են, որ Բերլինի ա-ռւտար-արդիւնաբերական դաշնակցութիւնները մի յայտարար են պատրաստում՝ ներկայացնելու գերմանական կառավարութեանը, որպէս զի այս վերջինը դադարեցնէ դանիացիների աքսորը հիւսիսային Նիւգիլիկի, որովհետև դանիաց շատ է վնասվում գերմանական առևտուրը: Գանիա-կան լրագրիները քաղաքում են՝ ընդհանուր առե-տրական յարաբերութիւնները Գանիայի և Գեր-մանիայի մէջ:

«Post» լրագիրը հաւատացնում է, որ Գրէյ-ֆուտի գործի վերաբերեալ գաղտնի dossier-ի մէջ գերմանական ոչ մի դօկումենտ չը կայ, որ մեղադրանք չիմը ծառայէր Գրէյֆուտի համար: Եթէ կան էլ այդպիսի դօկումենտներ, նրանք կեղծված են:

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.